ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2018 թվականի օգոստոսի 24-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-118

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «քիմիական նյութերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-118 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 23.08.2018թ.-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 24.08.2018թ.-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1

Հայտնում ենք, որ «Խաչպաչ» ՍՊԸ-ն /այսուհետ՝ Ընկերություն/ 2018 թվականի օգոստոսի 22-ին ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հարատարակված ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-118 ծածկագորվ մրցույթին ցանկություն ունի մասնակցելու, սակայն կան որոշակի պարզաբանումների կարիք կապված մրցույթի շրջանակներում հրավերում ներկայացված տեխնիկական բնութագրի վերաբերյալ: Մասնավորապես, Ընկերության համապատասխան բաժնի համար պարզ չէ թե տվյալ մրցույթի N 1 չափաբաժնի՝ «Նիկա քլոր» ապրանքի համար հնարավոր է արդյոք ներկայացնել նույն քիմիական ազդող նյութը դիքլորիզացիոնանուրաթթվի նատրիումական աղ պարունակող հաբեր, սակայն այլ «Դիմաքս քլոր» անվանում ունեցող ախտահանիչ միջոց , որն ունի ՀՀ ԱՆ կողմից հաստատված կիրառման մեթոդական հրահանգ: Ընկերության կողմից ներկայացված «պարզաբանում հարցում-» ը կցվում է:

Պարզաբանում N 1

Ի պատասխան Ձեր կողմից ներկայացված հարցմանը՝ հայտնում ենք, որ ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-118 ծածկագրով մրցույթի հրավերում կատարվել է համապատասխան փոփոխությունը: Հրավերի փոփոխության արդյունքում տվյալ մրցույթի N 1 չափաբաժնի՝ «Նիկա քլոր» ապրանքի անվանմանը կից ավելացել են «կամ համարժեք» բառերը: Ինչ վերաբերվում է «Դիմաքս քլոր» անվանում ունեցող ախտահանիչ միջոցի համարժեքությանը, ապա այն կգնահատվի տեխնիկական բնութագրերի հիման վրա:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-118 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ. Մկրտչյանին-ին:

Հեռախոս՝ 094 208020:

Էլեկտրանային փոստ՝ gnumnerhvkk@mail.ru:

ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-118_ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը